

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Բարձրագոյն մանիֆեստ—Կառավարական հաղորդագրութիւն—Ռուս-մայր-
նական պատերազմը—Ամենայն Հայոց կարողիկոսի կարգադրութիւնը—Բա-
գուի դիպրը—Դասաստանական վճիռներ Կարսում—Սասկացած պահպա-
նութիւն Սխայցիայի, Սխայնալաֆի եւ Բորչալուի գաւառներում—† Միխայ-
լովսկիյ, Չլետին, Մարկովնիկով, Վաննովսկիյ—Իրիբոեդովի մահուան 70-ա-
մեակը—Բունեբերգի ծննդեան հարիւրամեակը—Ժող. յուս. միեկիստ Ձեռ-
գերի հրաժարեցումն իր պաշտօնից—Կարգադրութիւններ մամուլի վերաբերեալ:

Աստուածային աջակից ողորմութեամբ Մենք Նի-
կոլայ Երկրորդ, Կայսր եւ Ինքնակալ ամենայն Ռուսաց,
Մոսկվայի, Կիեւի, Վլադիմիրի եւ Նովգորոդի, Թագաւոր
Ղազանի, Թագաւոր Աստրախանի, Թագաւոր Լեհաստա-
նի, Թագաւոր Սիբիրի, Թագաւոր Տաւրեան Խերսոնէսի,
Թագաւոր Վրաստանի, Տէր Պսկովի եւ Մեծ Իշխան
Սմոլենսկի, Լիբաւայի, Վոլդինի, Պոդոլիայի եւ Ֆինլան-
դիայի, Իշխան Էստլանդիայի, Լիֆլանդիայի, Կուրլան-
դիայի եւ Սեմիգալիայի, Սամոգետի, Բելոստոկի, Կո-
բլիայի, Տվերի, Իւգորի, Պերմի, Վեատկայի, Բուլգարիա-
յի եւ այլոց, Թագաւոր եւ Մեծ Իշխան Նովգորոդի, Ստո-
ւին Երկրների, Չերնիգովի, Բեաղանի, Պոլոցկի, Ռոստո-
ւի, Նարոսլաւի, Բելոզերի, Ուգորի, Օբդորի, Կոնդիա-
յի, Վիտեբսկի, Մստեսլաւսկի եւ բոլոր Հիւսիսային երկրի,
Հրամայող եւ Տէր Իվերիայի, Քարթալինիայի եւ Կաբարդինե-
ան երկրի եւ Հայկական նահանգի, չէրքէզական եւ լեռ-
նային իշխանների եւ այլոց ժառանգական Տէր եւ Տիրող,
Տէր Թուրքեստանի, Թագաժառանգ Նորվեգիայի, Դուքս
Շլէզվիգ-Հոլշտինիայի, Ստորմարնի, Դիտմարսէնի եւ
Օլդենբուրգի եւայլն եւայլն Յայտարարում ենք
մեր բոլոր հաւատարիմ հպատակներին Մեր օրտին

ցանկալի խաղաղութիւնը պահպանելու հոգացողութեամբ՝ Մենք ամեն ջանք դորժ դրինք հաստատելու անդորրութիւն Հեռաւոր Արեւելքում։ Այս խաղաղասիրական նըպատակով Մենք հաճութիւն տուինք ճապոնական կառավարութեան առաջարկութեանը՝ վերաբննել երկու կայսրութիւնների մէջ գոյութիւն ունեցող համաձայնութիւնները կորէական դորժերի վերաբերմամբ։ Սակայն այս առիթով սկսուած բանակցութիւնները կատարածին չհասան, և ճապոնիան նոյնիսկ չսպասելով Մեր կառավարութեան վերջին պատասխանառաջարկութիւններին՝ յայտարարեց, որ բանակցութիւնները դադարեցնում է և խզում է դիպլոմատիական յայաբերութիւնները Ռուսաստանի հետ։ Չնախազգուշացնելով այն մասին, թէ այսպիսի յարաբերութիւնների ընդհատումը նշան է պատերազմական գործողութիւններ սկսելուն՝ ճապոնական կառավարութիւնը հրաման տուեց իր ականանաւերին՝ յանկարծակի յարձակուել Մեր նաւատորմի վրայ, որ կանգնած էր Պորտ-Արտուր բերդի արտաքին նաւահանգստում։ Այս մասին ստանալով ղեկուցում Մեր փոխարքայից Հեռաւոր Արեւելքում՝ Մենք իսկոյն հրամայեցինք սպառազինուած ուժով պատասխանել ճապոնիայի մարտակոչին։ Յայտարարելով Մեր այս վճռի մասին, Մենք անյողդողդ հաւատով դէպի Բարձրեալի օգնութիւնը և հաստատուն յուսով Մեր բոլոր հաւատարիմ հպատակների միասիրտ պատրաստականութեան վրայ՝ Մեզ հետ միասին հայրենիքի պաշտպանութեան համար օտքի կանգնելու՝ մաղթում ենք Աստուածային օրհնութիւն Մեր բանակի և նաւատորմի քաջարի զինուորական վրայ։ Տրուած է Սանկտ-Պետերբուրգում, յունուարի քսան և եօթներորդ օրը, Քրիստոսի ծննդեան հազար ինն հարիւր չորրորդ թւականին, իսկ Մեր թագաւորութեան տասներորդին։ Իսկականի վրայ նորին Կայսերական Մեծութեան Սեփական ձեռքով ստորագրուած է. ռեիկոլայ։

—Նառավարչական հաղորդագրութիւն փետրուարի 5-ից—

«Օտարերկրեայ մամուլում ճապոնական աղբիւրների հիման վրայ երեւաց հաշիւ դիպումատիկական յարաբերութիւնների խզման անմիջապէս նախընթաց դէպքերի մասին, ինչպէս և ապա Ռուսաստանի և Ճապոնիայի մէջ տեղի ունեցած պատերազմական գործողութիւնների մասին: Ինչպէս և պէտք էր սպասել, այդ հաշիւ մէջ դիտմամբ յեղաշրջուած և այլալուծուած են փաստերը՝ այն նպատակով, որ արդարացնեն ամեն տեղ հասարակական խղճմտանքը վրդովող տոկիական կառավարութեան վարմունքը, որ եղծեց միջազգային յարաբերութիւնների ամենաստուրական կանոնները: Ահա դէպքերի իսկական ընթացքը. «յունուարի 3-ին, երբ ստացուեց փոխարքայի հեռագրական հաղորդագրութիւնը ճապոնական վերջին առաջարկութիւնների մասին համաձայնութեան ծրագրի վերաբերմամբ, Կայսերական կառավարութիւնը ձեռնարկեց նրանց մանրազնին ըննութեան. յունուարի 12-ին Պետերբուրգի ճապոնական դեսպանի հարցին նրան հաղորդուեց, որ Թագաւոր Կայսրը բարեհաճեց նշանակել պատասխանի ամենակողմանի ըննութեան համար, համապատասխան վարչութիւնների և փոխարքայի հետ խորհրդակցելուց յետոյ, տուանձին խորհրդակցութիւն, որը պէտք է կայանար յունուարի 15-ին, և հաւանօրէն, Բարձրագոյն վճիռը կը կայանայ ոչ շուտ քան յունուարի 20-ը: Յունուարի 20-ին Թագաւոր Կայսրը բարեհաճեց Բարձրագոյն հրամայել պատրաստել առանձին խորհրդակցութեան եզրակացութեան հիման վրայ Տոկիօի ոռւսաց դեսպանին տալու վերջնական հրահանգների ծրագիրը. յունուարի 21-ին, յիշեալ Բարձրագոյն հրամանի զօրութեամբ Հեռաւոր Արևելքի փոխարքային ուղարկուեց երեք հեռագիրներ, որոնք պարունակում էին Ճապոնիայի հետ համաձայնութեան լիակատար ընագիրը և բոլոր այն ապացոյցները ու նկատումները, որոնցով Կայսերական կառավարութիւնը ղեկավարուել է՝ մի քանի ուղղումներ մտցնելով վերջին ճապոնական առաջարկութիւնների մէջ, և վերջապէս ընդհանուր ցուցմունքներ, որոնք փոխարքան պէտք է յանձնարարէր Տոկիօի ոռւսաց դեսպանին ճապոնական կառավարութեան պատասխան տալու համար: Ժամանակ վաստակելու մտքով բոլոր յիշեալ հեռագիրները միևնոյն օրը ուղարկուեցին անմիջապէս բարոն Րոզէնին: Ուրեմն յունուարի 22-ին, Տոկիօի կառավարութիւնից յարաբերութիւնների խզման մասին ծանուցումն ստանալուց 48 ժամ առաջ արտաքին գործերի մինիստրը Պետերբուրգի ճապոնական դեսպանին ուղղուած իր նամակով լուր հաղորդեց, թէ բարոն Րոզէնին յանձնուել են Ռուսաստանի պատասխանական առաջարկները:

Յունուարի 23-ին փոխարքայից ստացուեց ծանուցումն, թէ իր ժամանակին հաղորդել է Տոկիօ Ռուսաստանի պատասխանական առաջարկները պարունակող բոլոր հեռագիրները: Օրուայ ժամը 4-ին ճապոնական դեսպանը Պետերբուրգում բոլորովին անակնկալ ուղարկեց արտաքին գործերի մինիստրին երկու յիշատակագիր, որոնց առաջին մէջ հաղորդուած էր, թէ Տոկիօի կառավարութիւնը խզում է անդրագոյն բանակցութիւնները այն կեղծ պատրուակով, իբր թէ Ռուսաստանը խուսափում է պատասխան տալու ճապոնական առաջարկութիւններին, իսկ երկրորդի մէջ—դիպլոմատիկական յարաբերութիւնների խզումը երկու կառավարութիւնների մէջ և ճապոնական դեսպանութեան ամբողջ կազմի Պետերբուրգից հեռանալու լուրը յունուարի 28-ին: Վերոյիշեալ երկու յիշատակագրերին կցուած էր ճապոնական դեսպանի մասնաւոր նամակը արտաքին գործերի մինիստրին, որով Կուրինօն յոյս էր յայտնում, թէ դիպլոմատիկական յարաբերութիւնների խզումն հնարաւոր եղածին չափ կարճ կը տևէ: Նոյն յունուարի 24-ին Հեռաւոր Արևելքի փոխարքան և Տոկիօի, Պեկինի և Սէուլի, դեսպանները ինչպէս և մեծ պետութիւնների մօտ բոլոր ռուսաց ներկայացուցիչները տեղեկացրուեցին հեռագրերով ճապոնիայի հետ յարաբերութիւնները խզելու մասին և Բարձրագոյն կայացած հրամանի մասին բարոն Բոզենին, թողնել Տոկիօն դեսպանութեան ամբողջ կազմով: Այդ շրջաբերական հաղորդակցութեան մէջ ցոյց էր տրուում նոյնպէս, որ Տոկիօական կառավարութեան վարմունքը, որ չսպասեց նոյնիսկ կայսերական կառավարութեան պատասխանին, դնում է ճապոնիայի վրայ այն հետևանքների պատասխանատուութիւնը, որոնք կարող են ծագել երկու պետութիւնների մէջ դիպլոմատիկական յարաբերութիւնների խզումից: Փոխարքան տեղեկացրեց հեռագրով յունուարի 25-ին, թէ ստացել է շրջաբերականը ճապոնիայի հետ յարաբերութիւնների խզման մասին: Թէև դիպլոմատիկական յարաբերութիւնների խզումը ամենեւին նշան չէ պատերազմական գործողութիւնների սկսելուն, ճապոնական կառավարութիւնը արդէն յունուարի 27-ի գիշերը և յետոյ յունուարի 27 և 28-ին կատարեց մի շարք վրդովեցուցիչ յարձակումներ ռուսաց պատերազմական և առևտրական նավերի վրայ, հակառակ միջազգային ընդհանուր ընդունուած կանոններին: Ճապոնական կայսրի հրամանը Ռուսաստանին պատերազմ յայտարարելու մասին կայացաւ միայն յունուարի 29-ին:

—Ռուս-ճապոնական պատերազմը գրաւել է պետութեան, հասակութեան և մամուլի ամբողջ ուշադրութիւնը: Հեռաւոր

Արեւելքում իր գերիշխող դիրքը զինուած ձեռքով պահպանելու համար ուսւաց պետութիւնը գտնում է իր բոլոր հպատակներին կողմից ոգևորուած աշակցութիւն։ Ռուսաստանի բազմազան լեզուների և կրօնների ներկայացուցիչները կատարում են մաղթանքներ ուսւաց զէնքի աշողութեան համար, ամեն տեղ առատ նուիրատուութիւններ են անում պատերազմից վնասուածներին օգնելու և ուսւական նաւատորմը ուժեղացնելու նպատակով։ Բնականաբար պատերազմի շնորհիւ երկրորդական կարգն են անցնում երկրի ներքին կեանքի հարցերը, զանազան վերանորոգումների ծրագրները։ Այդ պատճառով երկրի կուլտուրական առաջադիմութեան բոլոր կոմնակիցները մաղթում են, որ ըստ կարելոյն շուտ վերջնայ գոռ պատերազմը և չքարդանայ նա այլ պետութիւնների միջամտութիւններով։ Ճապոնիայի հետ մենամարտութեան մէջ Ռուսաստանը վստահ է իր կարողութեան։

— «Մշակին» է ջ մ ի ա ծ ն ի Յ հաղորդում են, որ երբ էջմիածնում ստացուեց Բարձրագոյն մանիֆեստը պատերազմի յայտարարութեան մասին, Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի հրամանով Մայր Տաճարում փետրուարի 3-ին ամբողջ միաբանութեան ներկայութեամբ պատարագ և մաղթանք կատարուեց. պատարագիչն էր տեղապահ և Սինոդի նախնադամ Արիստակէս արքեպիսկոպոս Դաւթեան։ Մաղթանքից յետոյ Վեհափառ Կաթողիկոսը մի հեռագիր ուղղեց Պետերբուրգ, Նորին Կայսերական Մեծութեան, որով ամենահպատակօրէն յայտնեց իր և իր հօտի ամենահպատակօրէն անկեղծ զգացումները՝ զեկուցանելով միւսնոյն ժամանակ, որ էջմիածնի ամբողջ միաբանութիւնը հանդիսաւոր մաղթանք կատարեց Նորին Կայսերական Մեծութեան երկարակեցութեան և ուսւաց փառաւոր զօրքին յաղթութիւն ուղակելու համար։

Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսը շրջաբերական հեռագրով պատուիրել է բոլոր թեմակալ առաջնորդներին, որ Ռուսաստանի բոլոր հայ եկեղեցիներում մաղթանքներ կատարուեն պատերազմի աջող ելքի համար։

«Прав. Вѣст.»-ը հաղորդում է, որ Թաքաւոր Կայսրը ստանալով Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ամենահպատակ զգացմունքներ արտայայտող հեռագիրն իր և իր հօտի կողմից՝ բարեհաճեց Սեփական ձեռքով մակագրել. «Անկեղծօրէն շնորհակալ եմ Կաթողիկոսից եւ իր հօտից»։

— «Вѣст.»-ը տպել է հետեւեալ հեռագիրը Բաքուից. «Այսօր փետրուարի 3-ին ցերեկւայ մօտ ժամը 2-ին ուսւական զէնքին յաղթութիւն տալու համար հայ հոգևորականու-

Թեան նախապէս նշանակած մաղթանքից յետոյ, երբ ամբողջ պարապետը ծածկուած էր աղօթողներով, հիմնը ածելու ժամանակ և երբ Թափորն սկսեց շարժուել՝ փողոցով՝ զրօշակները ձեռքերին և «ուռնյ»-ի ձայներով, ամբողջ մէջ մի ուռմբ նետուեց, որը պայթեց և մի քանի մարդկանց վիրաւորեց: Սկսուած է դատաստանական քննութիւն:

— Կարսից «Մշակ»-ին գրում են յունուարի 27—30-ին, «Երևանի նահանգական դատարանը իր Կարսի բաժնում՝ պ. Բակալօի նախագահութեամբ, պ. պ. Լեւկովի և Գեյերտովի անդամակցութեամբ դռնփակ քննեց Կարսի բնակիչ 31 հայերի գործը, որոնք մեղադրուում էին պատժական օրէնսգրքի 263 յօդ. հիման վրայ: Մեղադրում էր դատախազ Գլազովը, պաշտպանում էին Մոսկուայի երդուեալ հաւատարմատարներ Մալեանդովի, Մուրաւեովը և Նոմենդովսկին, օգնականներ Նախուտով և Գեորգովը՝ Թիֆլիսից: Դռնբաց յայտարարուած վճռով մեղադրուածներից 25-ը 266-դ յօդուածով դատապարտուեցին. 1) 2 քահանաներ 2 տարի և 6 ամիս կալանաւորների ուղղիչ բաժնում բանտարկութեան (266 յօդ. I մաս) 2) 10 հոգի—2-ական տարի (նոյնպէս I մաս 266 յօդուածով), բոլորն էլ բոլոր իրաւունքներից զրկուելով. 3) 3 հոգի դատապարտուեցին (266 յօդուածի I մաս) 1 տարի 3 ամիս բանտարկութեան, առանց իրաւունքներից զրկուելու. 4) 6 հոգի (266 յօդուածի III մասով) դատապարտուեցին 3 ամիս բանտարկութեան՝ առանց իրաւունքներից զրկուելու, 5) 4 հոգի (266 յօդուածի III մասով) 2 ամիս բանտարկութեան. և 6) 6 հոգի արդարացան:

— Կարսից «Մշակ»-ին գրում են յունուարի 30-ին. «Երևանի նահանգական դատարանի Կարսի բաժնի պ. Բակալօի նախագահութեամբ—պ. պ. Գեյերտովի և պատւաւոր դատաւոր Յիվինսկու անդամակցութեամբ դռնփակ քննեց Ուրութ գիւղի բնակիչների գործը, որոնք մեղադրուում էին պատժական օրէնսգրքի 264 յօդուածի հիման վրայ: Մեղադրում էր դատախազ Գլազովը—պաշտպանում էին—Մոսկուայից երդուեալ հաւատարմատար Մուրաւեովը և երդուեալ հաւատարմատարի օգնական Նախուտովը Թիֆլիսից: Դռնբաց յայտարարուած վճռով 2 մեղադրուածները մեղաւոր ճանաչուեցին 285 յօդուածով և դատապարտուեցին մէկը—մի տարով, միւրը 10 ամսով բանտարկութեան, իսկ մնացած 2-ը արդարացան:

— «Кавказъ»-ի պաշտօնական բաժնում հրատարակուած է իշխան կառավարչապետի № 14 հրամանը Կովկասի վարչութեան մասին, 1904 թ. փետրուարի 4-ից. «Ներքին գործերի

մինիստրի կարգադրութեամբ, ներկայ փետրուարի 3-ին հեռագրով ինձ հաղորդած՝ գործադրելու համար—Թիֆլիսի նահանգի Ախալցխայի, Ախալքալաքի և Բորչալուի գաւառներն այս օրուանից հրատարակուած են խստացուած պահպանութեան վիճակի մէջ, որի մասին յայտարարուած եմ տեղեկութեան և, ում հարկն է, գործադրութեան համար»:

—Յոռուարի վերջում և փետրուարի սկզբում ոռոսաց մանուշի, գիտութիւնը և հասարակութիւնը մի քանի խոշոր կորուստներ ունեցան. յոռուարի 27-ին Պետերբուրգում յանկարծամահ եղաւ ոռոսացիօլոդ-քննադատ-հրապարակախօս Նիկոլայ Կոնստանտինովիչ Միխայլովսկին, РУССКОЕ БОГАТСТВО ամսագրի խմբագիր-հրատարակիչը: 40 տարի նա մաքառում էր՝ ջատագով հանդիսանալով ազատ անհատականութեան: Լուրջ մտաւոր պատրաստութիւնը, համոզմունքների անյողողղղութիւնը, համարձակութիւնը, գրական խոշոր տաղանդը և պոլեմիկական զարմանալի ձիրքը նրան դարձրել էին ոռոս հասարակութեան խղճի և պատւի ներկայացուցիչ, լաւագոյն ձգտումների արթուն առաջնորդ: Նրա գրուածքները ամփոփուած են 7 պատկառելի հատորներում, որ ոռոս երիտասարդութեան և ինքնակրթութեամբ պարապող անհատների համար լաւագոյն ուսուցիչ կարող են լինել:

Համարեա միաժամանակ վախճանուեց ոռոսաց յայտնի քիմիկոս պրոֆեսոր Վադիմիր Վասիլևիչ Մարկովնիկով, որի գիտական աշխատութիւնները գնահատուած են և Եւրոպայում: Նա խստապահանջ էր, բայց միաժամանակ շիտակ և խղճի հետ կոմպրոմիսս չանող մի անձաւորութիւն:

Աւելի էր ծանօթ ոռոս ընթերցող հասարակութեան փետրուարի 3-ին վախճանուած Բորիս Նիկոլայևիչ Չիչերին, նախկին պրոֆեսոր. նա յայտնի էր փիլիսոփայական-հրապարակախօսական գրուածքներով, որոնցից նշանաւորն է «История политических учений»: Նա այն շիտակ պահպանողականներից էր, որոնց չէ սիրում «բուն ոռոս պահպանողական» կուսակցութիւնը: Չկարողանալով համակերպուել տիրող հոսանքներին՝ նա ստիպուած էր թողնել ամբիոնը և գրական-հասարակական ասպարէզներում ծառայել ոռոս հասարակութեան:

Փետրուարի 16-ին Պետերբուրգում վախճանուեց գեներալ-ադիւտանտ Պետր Սեմէնովիչ Վաննովսկիյ, գինւորական նախկին մինիստր, որ 1901 թ. մարտի 25-ից մինչև 1902 թ. ապրիլի 12-ը Ժողովրդի լուսաւորութեան մինիստրի պաշտօն վարեց: Այդ պաշտօնավարութեան ժամանակ զօրեղ հարուած տրուեց միջին կրթութեան հնացած ձևին Ռուսաստանում, և մը-

շակուեցին ժամանակակից պահանջներին աւելի համապատասխան ծրագրներ, որոնց մի մասը միայն իրականացաւ նրա յաջորդ մինիստր Զենգերի օրով:

— Յունուարի 30-ին լրացաւ ռուս յայտնի գրող Ա. Ս. Գրիբօեդովի մահուան 75-ամեակը, որ Ռուսաստանի զանազան տեղերում հանդիսաւոր կերպով յարգուեց: Թէհրանում ֆանատիկոս պարսիկ ամբոխից սպանուած ռուսաց այդ դեսպանը անմահացաւ ռուսաց գրականութեան մէջ իր մի հատիկ կոմեդիայով, որ Թարգմանուել է և ներկայացրուել նաև հայերէն լեզուով. «Горе отъ ума» («Նելքից պատուհաս») մի ոգևորուած, հանճարեղ բուն բողոք է բանաստեղծի ժամանակակից ռուս իրականութեան դէմ, ուստի նա արգելուած էր թէ տպագրութեան և թէ ներկայացման համար: Այժմ այս գրուածքը ռուս գրականութեան պարծանքներից մէկն է. նրա հերոս Չացկին ռուսական կեանքի Համլետն է, որ մինչև սրտի խորքը վրդովւում է՝ տեսնելով հայրենի կեանքի յետամնացութիւնը, շրջապատող կուշտ և սահմանափակ եսական մարդկանց ինքնահաւանութիւնը, կեղծիքի վրայ հիմնուած հասարակական յարաբերութիւնները և ստրկամիտ օտարամոլութիւնը:

— Յունուար 23-ին Ֆինլանդիան տօնում էր իր ազգային բանաստեղծ Ոոհանն-Լիուվիգ Րունեբերգի ծննդեան (1804 թ.) հարիւրեամեակը († 1877 թ.): Շվեդացի ծագումով, նա գրում էր շվեդերէն, որը մանաւանդ նրա ժամանակ հաւասար քաղաքացիական իրաւունք ունեւ ֆիննականի հետ իր երկրի ազգաբնակչութեան համար: Նա ֆիննական ազգային հիմնի հեղինակն է: Այդ հիմնի բառացի Թարգմանութիւնը ընթերցողը կը գտնի «Հազար լճերի և կղզիների երկրում» յօդուածով, որ տպուած էր 1901 թւականին Մուրճի № 8-ում: Այդ յօդուածի շարունակութեան մէջ (№ 9) մեր աշխատակից բժ. Բ. Օհանեանը մի քանի ուշադրաւ տողեր նուիրել է և Րունեբերգի միւս գրուածքներին: Րունեբերգը վկայ է եղել շվեդ-ռուսական պատերազմին և ունի պատմածքներ այս կեանքից, որոնցից ցնցող է «Գիրեզմանը Պերրոտում» պատմուածքը:

— Յունուարի 24-ին համաձայն իր խնդիրքին հիւանդութեան պատճառով հրաժարեցրուած է ժող. լուսաւորութեան մինիստր Գ. է. Զենգեր, նշանակուելով սենատոր: Ժող. լուսաւորութեան մինիստրութեան ժամանակաւոր կառավարիչ է այժմ մինիստրի օգնական Ս. Մ. Լուկիանով:

— Կարգադրուած ինններ մամուլի վերաբերեալ. — Ներքին գործերի մինիստրը և արդարադատութեան և ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնների կառավարիչները և սըր-

բաղնազոյն սինոդի օրեր-պրոկուրորը, գրականութեան և մամուլի կանոնադր. 148 յօդուածի ծանօթութեան հիման վրայ, այս փետրուարի 8-ի խորհրդածութեան մէջ որոշեցին բոլորովին դադարեցնել Թիֆլիսում վրաց լեզուով լոյս տեսնող «Կվալի» անունով հանդէսը «Ջեջիլի» յաւելուածով:—Գրաքննական և մամուլի մասին կանոնադր. 184 յօդ. հիման վրայ ներքին գործերի մինիստրը որոշեց դադարեցնել «Вѣстникъ Юга» լրագրի հրատարակութիւնը վեց ամսով:—Նոյն յօդուածի հիման վրայ ներքին գործերի մինիստրը որոշել է դադարեցնել 8 ամսով «Юго-Западная Недѣля» հանդէսի և 3 ամսով «Енисей» լրագրի հրատարակութիւնը:—Ֆինլանդիայում մամուլի գործերի գլխաւոր վարչութեան կարգադրութեամբ մի ամսով դադարեցրուած է Ուլէաբորգ քաղաքում լոյս տեսնող «Լուխի» լրագրի հրատարակութիւնը:—Գաղարեցրուած է 3 ամսով նաև «Уралецъ» լրագրի հրատարակութիւնը:

«Русское Богатство» (№ 1) ամսագրում կարդում ենք հետեւալը՝ քաղուած «Моск. Вѣд.» թերթից. «Ներքին գործերի մինիստր Վ. Կ. Պլէէի նախաձեռնութեամբ պէտք է հիմնուի առանձին բիւրօ, որի մէջ պիտի ստուգուեն Ռուսաստանից արտասահման և արտասահմանից ստացուած բոլոր հեռագրական տեղեկութիւնները: Այդպիսով,—ասում է «Московскія Вѣдомости» —վերջ կը դնուի արտասահմանում Ռուսաստանի մասին սուտ և տենդենցիոզ տեղեկութիւնների տարածմանը, իսկ Ռուսաստանում՝ նոյն տեսակ սուտ և տենդենցիոզ արտասահմանեան տեղեկութիւններին Ռուսաստանի մասին» *):

«Օրէնքների ժողովածուի» մէջ տպուած է, որ 1903 թ. դեկտ. 10-ին Բարձրագոյն հաճութիւն է տեղի ունեցել փոփոխելու պարբերական մամուլի ժամանակաւոր հրատարակիչների և խմբագրների հաստատութեան կարգը. թողնւում է նահանգապետի իշխանութեան թոյլտուութեամբ՝ տեղական պարբերական հրատարակութիւնների հրատարակիչների և խմբագիրների յանկարծակի բացակայութեան դէպքում այդ հրատարակութիւնները ստորագրել ժամանակաւորապէս հրատարակիչ կամ խմբագրի փոխարէն այլ բարեյոյս անձերի, որոնց մասին կը միջնորդեն հրատարակութիւնների սեփականատէրերը:

*) «Московскія Вѣдомости», 1904 թ. յունուարի 7: